

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ


Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ րազրի

ԳԱՀԻՔ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահիւն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	Յրակի 20
Վեցամսեայ	« 12

E. TOROSSIAN

Dirac.-propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՒ ԹՂԹԱՄԱՐԻ ԾԱԽՔՔ ԽԱՐԱԳՐՈՒՄԻ ԱՎՐԱՅ Կ՝

ԽԱՐԱԳՐՈՒՄԻ ԱՎՐԱՅ Կ՝ ԳՐՈՒՄԻ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ա.ՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ ԵՆ

ԽՐԱԿԱՆ ԿԱՆ Ա.ՉԴ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԻ տարւոյ բաժանորդագիրը որկէջ Տնօրինութեան հասցէին :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժանորդներէն աչ ջերմակէս կը խնդրուի, որ բարեհաւան լինախորդ տարիէն մնացեալ պարտոց կցեալով որկէջ նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԻ Տարեշրջանի բաժանորդագիրը, եւ հարկ չը քողոյ մասնաւոր դիմումներու, որոնք նոր դրամաւորներն մը պիտի թղթան ԱՐՇԱՆՈՅՍԻ տարիէն բազմապատ Տնօրինութեան :

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Ե .

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Փոքրածաւալ թերթի մը անձուկ սահմանը թէն չ'ներեր զբաղել այսպիսի մեծ խնդիրներով, որոնք ըմբռնուելու համար պէտք ունին աւելի ընդարձակ քննասիրութեանց, բայց նիւթին կարեւորութիւնը մեզ կը հարկադրէ զայն փոքր ինչ շօշափելու :

Ի բաց առեալ մարդկութեան մի անընչան փոքր մասը, որ անձանթը կը քննէ, և կարծես՝ գերբնական կարողութիւն մը ունի սլանալու դէպ երկնից անհունութիւնը կամ սուղուելու երկրագունտիս խորերը, և որ ամեն բանի վրայ ունի իր մասնաւոր համոզումը — ո՛չ միշտ ուղիղ — համոզում, զոր՝ շատ անգամ՝ երկնոտութեամբ կը հըրապարակէ, եթէ բոլորովին իր սրտին մէջ չ'պահեր. Ի բաց առեալ մարդկային մեծ ընտանիքէն գրեթէ անշատեալ այդ փոքր մասը, մեծամասնութիւնը՝ զոր պէտք է հանրութիւն կոչել՝ իր կարծիքը կամ ըմբռնումը կը պարտի հանրային գործիչներուն. դասակարգ մը զոր գլխաւորաբար կը կազմեն՝ ինչպէս տեսանք նախորդ գրութեան մը մէջ՝ ընտանեաց հայրը, ուսուցիչը, քահանայն, հրապարակագիրը և յեղափոխականը :

Մարդկութեան հարիւրին իննսուն և ինը մասը, որ իր խորհելու, տրամաբանելու կարողութիւնները բարձի թողի ըրած է գրեթէ, իր կարծիքը — չ'ըսենք համոզում մը — կը հիմնէ իր լսածին և վեր ի վերոյ տեսածին վրայ. Եւ որովհետեւ անհամար

փորձառութիւններով գիտենք որ ամեն լըսուածը կամ տեսնուածը հեռու է միշտ անփոփոխ ճշմարտութիւն ըլլալէ, ուրեմն պէտք կար այնպիսի տարրի մը, որուն պաշտօնն ըլլար ժողովուրդն զգուշացնել սխալ կամ խեղաթիւրեալ կարծիքներէ, և զայն առաջնորդել՝ եթէ ոչ ամենայն ապահովութեամբ՝ գէթ ամենայն անկեղծութեամբ գէպի ճշմարտը և ուղիղը : Այս վսեմ և գերազանցապէս պատուաբեր պաշտօնը ինքնաբերաբար ստանձնուած է հանրային գործիչներու կողմէն : Հետեւաբար երբ գիտող մը կ'ողբայ հանրային սրխալ, զնասարար, աղիտաբեր « կարծիք » ներք, նա պարզապէս հանրային գործիչները կ'ամբաստանէ իբր կեղծ, կամ գէթ իբր տգէտ :

Հիմնուելով այս սկզբունքին վրայ, երբ կը տեսնենք ընտանիք մը՝ բարոյապէս կործանուելու մօտ, կրնանք՝ քիչ բացառութեամբ՝ պատասխանատու բռնել ընտանեաց հայրը, երբ կը տեսնենք անկարգ և վատթարացած ուսումնարան մը, կրնանք դասապարտել ուսուցիչը. երբ հանրատարած անկրօնութեան առջև կը դռնուինք, կըրնանք կղերին օձիքը ձեռք առնել. եթէ սխալ ուղղութեան մը կը հետեւինք մեր հանրային կենցաղին մէջ, կրնանք հրապարակագիրը ամբաստանել. եթէ յեղափոխութեան խոյս կուտանք, և նոր գաղափարներու առջև կ'ընդվզինք կրնանք յեղափոխականը պարտաւել :

Երկու տեսակ « հանրային կարծիք » կը տիրապետեն երկրիս վրայ. մին է՝ ընդհանրական, կամ սեփական համայն մարդկութեան. կրօնքը, քաղաքականութիւնը, գիտութիւնները և այլն : Երկրորդն է՝ մասնակի կամ ազգային :

Չգենք առաջին տեսակը՝ որու հետ գործչ'ունինք, և զբաղինք երկրորդով, որ աւելի շահեկան է մեզի համար :

Մարդ երբ ցաւով կը տառապի, դարմաններ կը փնտռէ՝ սփոփուելու. նոյնպէս մենք ալ եթէ կը գանգատինք մեր « հանրային կարծիք » ներքն, պէտք է միջոցներ փնտռենք զանոնք բարւոքելու, միանգամայն հեռացնելով աննպաստ պատճառները :

Կ'ընդունիմ որ կան արմատացած, հընադարեան « կարծիքներ » զոր խիստ դժուար է լալել, բարեփոխել. զոր օրինակ կրօնական խեղաթիւրումները, սխալ ըմբռնումները. բայց կան նաև կարծիքներ, որոնք նորածին են. կան ալ որ դեռ նոր մուտ գըտնելու վրայ են, և որոնց գիւրդին է փափաքուած ուղղութիւնը տալ. ինչպէս են

գարավերջիկ ընտանեկան կեանքը. ուսումնարանը, հրապարակագրութիւնը և յեղափոխութիւնը :

(Շարունակելի)

Պ .

ՆԱՄԱԿ ԲԱՐԻՁԷՆ

Հ Ա Ց Կ Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ը ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՁ

Բարիկ յ Հոկտ. 1900

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ — Անցեալ շաբթու Յուլիանոսի համաժողովներու սրահին մէջ տեղի ունեցաւ Խաղաղութեան Համաժողովը, հինգշաբթի օր (Հոկտ. 4 ին) կէս օրէն յետոյ ժամը 3 ին, Համաժողովին նստին նիւթն էր ՀԱՑԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ որուն վիճաբանութիւնը տեւեց մօտ 2 1)2 — 3 ժամ : Մշակի խմբագիրներէն Պ. Համբարձում Առաքելեան տեղեկագիր մը պատրաստած էր կամ պատրաստել տուած էր, զոր կարգաց ժողովին համարատուն Պ. Նովիքոֆ. յետոյ իրարու ետեւէ խօսեցան Պ. Տը Ռօպէրթի, Մարիլիէ. Յովհաննէսեան և Ահմէտ-Րիզա. մի քանի ուրիշ Պարոններ անցողակի կերպով խօսք առին մէկ քանի նախադասութիւններ ըսելու : Եւ որովհետեւ ներկաներուն մէջ (մօտ 500-600 հոգի) շատ անգղիացիներ կային, Պ. Շմիթ անգղիացին, վայրկեանապէս անգղիերէնի կը թարգմանէր ճառախօսներու ըսածները :

Վիճաբանութիւնը ինչպէս ըսինք բաւական երկար տեւեց. մասնաւոր երբ խոնդիրը եկաւ Հայոց խնդիրը կարգադրուելու մասին. Պ. Մարիլիէ, տը Ռօպէրթի և Նովիքոֆ կ'առաջարկէին Հայոց խնդիրը վերջացնել կրէտէի պէս կամ նմանօրինակ վարչութիւն մը շնորհելով անոր, որով բարեփոխումներ լինին և ժողովուրդը հանգիստ և ապահով ապրի : Ահմէտ Րիզա հակառակեցաւ — բարեփոխումներու ծրագիրը ընդունելով հանգերձ — կրէտէի նման վարչութեան խօսքին. երկար վիճաբանութիւններ եղան այդ մասին, քուէարկուեցաւ, նորէն խօսուեցաւ, դարձեալ քուէարկուեցաւ և վերջապէս յետին քուէն տալով՝ « առաջարկութեան » մէջէն « նման կրէտէ » ի խօսքը վերջացաւ այսինքն շնջուեցաւ. ըսել է Ահմէտ Րիզա յաղթանակը տարաւ. . . .

Բաւական թուով Հայեր ալ ներկայ էին այդ Համաժողովին, որոց մի քանիսը իբրև անդամ և մօտ 30 ի չափ ալ իբր ուկնդիր և հետաքրքիր :

Մ . Ս . ԴԱԻԹ ԲԷԿ

ՆԱԽԱԿ ԴԱՆՈՒԹԻՒՆ

... Խմբագրութիւն ԱՐՇԱԼՈՅՍ Ի Աստ

Կը խնդրուի որ անկիւն մը չնորհէք հետեւեալ երկտողին :

Հանգուցեալ Կարապետ Աղա Գալուստի կենսագրութիւնը կարգացինք « Նոր-Օր » Ի մէջ որ պատրաստուած էր Առաջնորդարանի գրագիր Պարոն Նազարէթ Աղազարմեանի կողմէ :

Այդ կենսագրականը կատարելագոյն թերի գրուածք մ'էր . որովհետեւ երբ հանգուցեալ Կարապետ Գալուստի Աղագային հաստատութեանց ըրած կտակներուն վրայ կը խօսէր անոր հեղինակը , պէտք էր որ անոր կցէր նաեւ հանգուցեալին հարստութիւնը իւրացնողներուն կենսագրականները , եւ ասկէ զատ՝ թուէր հանգուցեալին ազգային հաստատութեանց համար ձգած գումարներուն փոխարէն հոս եկած գացած քըննիչներուն համար եղած ծախքերն եւ անոնց 100 Ին 5 տոկոսով մինչեւ ցարդ ինչ գումարի մը յանգիլը . որպէսզի կարելի ըլլար գաղափար մը կազմել Գալուստի կտակէն ազգային հաստատութեանց տեսած շահն ու վնասը :

Կը յուսանք թէ փութով այս թերիները պիտի լրացնէ կենսագրութիւնը (1) :

Կ. ՄԻՀԱԼՈՅՍ

11 Հոկտ . 1900 Գահիրէ

(1) Առաջնորդարանի գրագիրը եղիպտոսահայոց ամենուն ալ ծանօթ է . անոր ուժը այդ ճշմարտութիւնները հրատարակելու համար շատ . . . անբաւական է , հետեւեալը աւելորդ է անկէ բան մը յուսալը : Օր պիտի գայ թերեւս եւ շատ ուշ ըլլալու է' , որ ատիթը ներկայսնայ մեզ բացատրելու համար առաջնորդարանի գրագիրն գործերը եւ կարողութեան սահմանները . . . :

ԽՄԲ .

Տիար Ա . Զարեհեանի նամակն , որուն հրատարակութիւնը խոստացած էինք մեր նախորդ թիւով , հետեւեալն է :

Պատուարժան

Խմբագրութիւն ԱՐՇԱԼՈՅՍ Ի Աստ

Պատ . ԱՐՇԱԼՈՅՍ Ի ի նախորդ թիւով հրատարակուած « ճշմարտութեան ձայն » վերնագրով հրատարակուած « Նոր-Օր » խմբագրութեան Պ . Ս . Բիւրատ առաջինը ինք ըլլալով իբր ամբաստանեալ , կը պատասխանէ հրատարակման հարցին : Իր կողմէ ներկայացուցիչ կարգելով Տիարը Առաքել Մ . Պէրպէրեան , Գրեգոր Շանթունի եւ զիս , խնդրելով որ անյապաղ կազմուի առաջարկուած ընկերակազմի անունը : Որքան փափուկ , սակայն օգտակարութեան անսակիչով ընդունեցինք այդ պաշտօնն :

Արդ հարկաւոր դիմումը ըլլալէ յետոյ առ որ անկէ , կը ցուցնուի որ մերժում միայն կ'ընդունինք անոնց կողմէ , ուստի իբր պարզ անգամ մը ժողովքէն անհրաժեշտ կը նկատուի դիմել մասնակցի որով հրատարակելու ամբաստանութիւնն եւ որով կարելի պիտի ըլլայ լսեցնել ճշմարտութեան ձայնը ու հանրութեան առջեւ պարզել ինչ որ մութի մէջ է եւ ինչ որ նեղ շրջանակի մը մէջ մնալու բնութիւնը ունի :

Ուստի պարտականութենէ մը մղուած կը փութով յանձնել Պատ . Խմբագրութեանը յիշեալ ամբաստանագիրն , խնդրելով որ հրատարակ հանէ իր Պատուական լրագրի միջոցաւ , որպէս զի հասարակութիւնը որու շահերը միայն ունինք ի նկատի վերահասու ըլլայ բոլոր իրողութեան :

Չայս ընկելով կը յուսամ թէ խզի պարտք մը կատարած ըլլալու գոհունակութիւնը պիտի ունենան :

Հաճեցէ՛ք ընդունիլ յարգանացս հաւատարմիցն : 9 Հոկտ . 1900 Ա . ԶԱՐԵՀԵԱՆ Գահիրէ

ԱՂՈՏ ԼՈՅՍ ՄԸ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՅՐ—ԴԻԻԱՆ

1 . « Նոր-Օր » Ի վարչութեան նախագահը Վսեմ . Եռսուֆ Պէյ Աղլի , նախադահի պաշտօնը ստանձնելէ քիչ ժամանակ վերջ գրաւոր հրատարական մը կ'ուղղէ վարչութեան Քարտուղար Տիար Սմբատ Փափագեանի , իսկ սա , կը պահէ հրատարականը , անպատասխանի թողնով զայն , ո'չ ալ կը հրատարակէ Նոր-Օր Ի մէջ ի գիտութիւն ընկերութեան անգամոց ու հանրութեան . մինչդեռ վարչութիւն մը գեր ունենալէ կը դադրի առանց նախագահի , եւ ինք , Քարտուղարը , գիտնալով հանգրձ այդ ճշմարտութիւնը , կը մնայ անտարբեր , եւ այնուհետեւ , իր անձին վրայ կեդրոնացուցած վարչութիւնը , իր բոլոր ընթացքին մէջ մատնել կուտայ իր ներքին դիտումը , որ է զինք միայն ճանչցնել տալ « Նոր-Օր » Ի վարչութիւնը (1) :

2 . Երբ Գործ . Ժողովոյ գրամական կազմութիւնը ազնապալից դարձաւ ու հարկ եղաւ « Նոր-Օր » Ի Քարտուղարէն փոխառութիւններ կատարել , թերթին անխափան շարունակութեանը համար , Քարտուղարին առաջարկութեանը վրայ , Գործ . Ժողովոյ կողմէն վարչութեան անգամակցող խմբագրական ու մասնակարարը , նախընտրութիւն տալով ընկերութեան շահերուն , հաւանեցան որ ջնջուի յանուն Գործ . Ժողովոյ չըջարեթութեան հանուած « Նոր-Օր » Ի ընկալագիրները , ու նորեր տպագրուին , պայմանաւ որ անոնք կրեն , վարչութեան կնքոյն ու Քարտուղարին ստորագրութեան հետ , նաեւ Գործ . Ժողովոյ կնքը . մինչդեռ ինք , Տիար Փափագեան , ընդունելէ յետոյ այդ կարգադրութիւնը , չ'եմ գիտեր ինչ դիտումով չ'գործադրեց զայն , ու ընկալագիրներն սկսաւ հրատարակ նետել միայն իր ստորագրութեամբ եւ վարչութեան կնքով : Այս վարմունքն ինչ է , եթէ ո'չ Գործ . Ժողովոյ հեղինակութիւնն արհամարհել , որմէ կը ըզլիս « Նոր-Օր » Ի վարչութիւնը ըստ ծրագրին (2) :

(1) Անշուշտ եպերելի է Տ . Քարտուղար-Ներկայացուցչի ընթացքը , բայց նա մակագիրը որ՝ իբր « Նոր-Օր » Ի խմբագրական վարչութեան աչքի զարնող մի անդամն էր , ինքը ինչո՞ւ լուծեց Տ . Ս . Փափագեանի զեղծումին առջեւ : Նա , որ անգամակցած չ'էր ընկերութեան , անոր շահերն ալ հոգ չ'էր ընել . բայց ինք , Տ . Ս . Բիւրատ , իբր ատենագրութեան Ժողովոյ , զո՞վ կ'ուղղէր խաբել , և որմէ շահը կը մատնէր կամ կը պաշտպանէր իր մեղսակցութեամբ : Եւ երբ Վսեմ . Եռսուֆ Աղլի Պէյին հրատարակել « Արշալոյս » Ի մէջ կը կարգացուէր , ինք ինչո՞ւ կը ճգնէր հերքելու այդ լուրը եւսյն եւսյն :

(2) Ամբաստանագրոյն այս երկրորդ հատուածը բոլորովին անտրամաբանական է և հակասական : Ա . Քանի որ՝ ինչպէս առաջին հատուածին մէջ կ'երեւայ՝ Տ . Քարտուղար-Ներկայացուցչի իր գոյնը դուրս տուաւ նախապէս , ինչո՞ւ խմբագրական ու մատակարարը դարձեալ անոր կը դիմեն փոխառութեան համար . աւելի բնական և աւելի որոշ չ'էր ըլլար դիմել Մայր-Դիւանին որ ընդհ . Ժողովով մը կարգադրէր գործը :

Բ . Յանուն Գործ . Ժողովոյ « Նոր-Օր » Ի ընկալագիրները ջնջուելով ինչպէ՞ս նախնորութիւն տրուած կ'ըլլայ ընկերութեան շահերուն , քանի որ այդ ջնջումը Գործ . Ժողովէն և հետեւեալ ընկերութեանէն բոլորովին կ'անջատէ « Նոր-Օր » Ի և զայն ամ-

3 . Սեպտ . 23 Ի ընդհ . Ժողովոյ (3) նիստին մէջ , երբ « Նոր-Օր » Ի խմբագրական քարտուղարէն պահանջեց վարչութեան ծրագիրը ներկայել ընդհ . Ժողովին , ծրագիր , որուն երեւան բերուելը մեծ կշիռ պիտի ունենար , հոն գծուած ըլլալով Գործ . Ժողովոյ և վարչութեան , խմբագրական ու Քարտուղար-Ներկայացուցչին , իրաւասութեանց սահմաններն ու յարաբերութեանց բնութիւնը , Տիար Քարտուղարը չ'ուղեց մէջ տեղ հանել . իսկ առժամեայ Մայր-Դիւանը , զգալի ընել կուտար ծրագիրը պահուելուն պատճառը , որ մեղի անձամբ է , եւ որ սակայն Մայր-Դիւանին կողմնակալ ողին կը ցուցանէ , միեւնոյն ժամանակ կը զրկէ ընդհ . Ժողովը վերահասու ըլլալու իրաւունքէն , ընկերութեան համար կ'ենտանալ կարեւորութիւն ունեցող խնդիրներու լուարանութեանց (3) :

4 . Ծրագիրը մէջ տեղ չ'հանելու յոյժովութեան քաջալերուած ու առժամեայ Մայր-Դիւանի բացարձակ պաշտպանութեամբ զինուած սեպտ . 23 Ի նստին մէջ « Նոր-Օր » Ի վարչութեան քարտուղարը , ա'լ տէր դարձած « Նոր-Օր » Ի , կ'սկսի կարգ մը հարցապնդումներով շարունակ ընդհ . Ժողովը , հաշիւ կը պահանջէ խմբագրականէն , որ միեւնոյն ատեն Գործ . Ժողովոյ ատենագրութեան է , կ'ամբաստանէ զայն՝ Յէյ յումէն բաժանորդի մը կողմէն զրկուած 35 զրջը քովը պահած ըլլալու յանցանքով . մինչդեռ չը կրնար խորհիլ թէ՛ այդ գումարը թերհաշիւ մ'է 60 զրջ . ի տարեկան բաժնեկցումը մը , որուն մընացորդը դեռ չ'է գանձուած և ոչ ալ ընկալագիր տրուած . թէ՛ ըստ ծրագրի , վարչութիւնը պարտաւոր է հաշիւ տալ 3 ամիսն անգամ մը Գործ . Ժողովոյ , եւ թէ՛ այդ 35 զրջ . ը սեպտ . 2 թուականը կըտը ետամտան հաշուեկշիւն վերջը հասած է , եւ յոյժը երեք ամիսներուն մէջ յաջորդաբար հաշուեկշիւն կ'ըլլայ . բաց աստի , Գործ . Ժողովոյ ատենագրութեան , պարտաւորեալ էր այդ գումարը վար դնելու , հիմնուելով հետեւեալ անհերքելի պատճառներուն վրայ .

Ա . Եռամսեայ հաշուեկշիւնը ներկայանալէ յետոյ , չորրորդ ամսուան սկիզբէն խմբագրական իրաւունք կ'ունենար , ըստ պայմանագրութեան (4) , « Նոր-Օր » Ի հաստիքին մէկ քառորդին վրայ , որուն երեք քառորդը պիտի ըստանար ամսէ ամիս , մնացեալ մէկ քառորդն ալ տարեկան ամբողջովին ստանալու պայմանաւ :

Բ . Երբ սեպտ . Ի հաշուոյն խմբագրականը զրամ կը պահանջէ . քարտուղարն ու իրեն հետ Մայր-Դիւանի Ատենագրութեան չ'են ճանչնար որ եւ է վճարում , առարկելով թէ՛ ինք , խմբագրականը , հիմնադրելով ըլլալով « Նոր-Օր » Ի , պարտ էր ծրագրար ու անձնուրաբար ծառայել :

Ս . ԲԻԻՐՍ

(Շարունակելի)

բողջապէս կը դնէ ընկալագիրներն ստորագրողին տրամագրութեան տակ :

Գ . Երբ այս (անհեթեթ) կարգադրութիւնը չ'յարգուեցաւ Քարտուղար-Ներկայացուցչի կողմէն , ինչո՞ւ Մայր-Դիւանին չ'ըողքեց Գործ . Ժողովը , որմէ կը բղխի վարչութիւնը : Ո՛չ այս հատուածը փոխանակ լուսատրեւելու , աւելի կը մթնցնէ վարչութեան և Գործ . Ժողովոյ յարաբերութիւնները : Թերեւս հոս կ'սկսի խնդրոյն հոգեբանական շարժառիթները , որոնց վրայ նամակագիրը կը խօսէր քիչ առաջ :

(3) Այ՛ն , պէտք է որ այդ ծրագիրը կամ կանոնագիրը երեւան գայ . յիշեալ նիստերու ներկայ եղողներուն ամենամեծ պարտականութիւնն է պահանջել որ այդ գրութիւնը մէջտեղ ելլէ , ո'չ միայն կարգացուելու այլ բառ առ բառ ուսումնասիրուելու համար՝ հրատարակաւ :

(4) Ո՞ր պայմանագրութիւնն .

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐ ԵՐ

ՕՍՄԱՆ ԲԱՇԱ . — Օսման բաշան որուն վերջերս Մարսէյլ հասնելը ծանուցուեցաւ զօրաբաժնի զօրավար է :

Բաւական ժամանակէ ի վեր կատարուած էր և Սուլթանը զայն խիստ կերպով հակել կուտար , իր ձերբակալութիւնը որոշուած էր արդէն իբր դաւադիր Սուլթանին կենացը :

Օսման բաշա իր մտերիմներուն մէկէն իմացաւ այս առթիւ ձեռք առնուած միջոցները , և որոշեց փախչել :

Օգուտ քաղելով Մէսսօքըրի Պաշաս շոգենաւին Պօլսոյ շուրերուն մէջ գտնուելէն , քաղաքային հագուստով շոգենաւ մըտաւ ձիոյ այն միջոցին որ շոգենաւը ճամբայ կ'ելլար . իրեն կ'ընկերանար իր թարգմանը :

Հետեւեալ օրը միայն թուրք իշխանութիւնք փախուստը իմացան : Պաշասին Մարսէյլ հասնելէն օր մը առաջ Օսման բաշա նախաճաշեց միւս ճամբորդներուն հետ , մեծ համազօրեցողով , կուրծքը զարդարուած իր բոլոր շքանշաններով որոնց մէջ կար նաև « Լէօն տ'Օնէօնի » Գօմանտէօնի պատուանշանը :

Հետաքրքրականը այն է որ Օսման բաշա յայտարարած է թէ Տամատ Մահմուտ բաշային պիտի միանայ և այս նպատակաւ Մարսէյլէն ուղղակի Լոնտոն դացած է :

Հիմա քանի որ Մահմուտ բաշա եղիպտոս է , ա՛ն ալ հարկաւ հոս պիտի գայ :

ՁԱՐԻՆ ԴԵՄ . — Ռուսիայէն եկած կարևոր հաղորդում , մը կը յայտնէ Չարին կայսրութեան մէջ վտանգաւոր անիշխանական Բրօքականտի ընկերութեան մը գոյութիւնը , որուն վրայ քիչ ժամանակէ ի վեր ոստիկանութիւնը թանկագին տեղեկութիւններ սնէր :

Պերիլինէր-Տակեպրաթ թերթն է որ այս թղթակցութիւնը կը հրատարակէ հետաքրքրութեան շարժում մը գրգռելով այն լուրով թէ Չարին և կայսերական ընտանիքին կեանքը պահ մը այդ գաղտնի ընկերութեան վտանգուելու մերձեցած է :

7 Բոլոնիացի ընկերակազմները՝ որք կախուելու դատապարտուեցան , իրենց գաղափարներուն դէմ եղող գործաւորները սպաննելու և սպաննել տալու յանցանքով , կը պատկանէին այս գաղտնի ընկերութեան որն որ գործքով քարոզելը կը քաջալերէ . իբր միակ միջոց , Ռուսիոյ արդի քաղաքական Ռեթիլը փոխել տալու համար : Այս Բրօքականտին արդիւնքներն հետեւեալ պարագայից տակ դուրս եկած են :

Տասրօթ Սէյօի Մայր եկեղեցւոյն կառուցման ժամանակ ականներ գտան զորս դրած էր Բոլոնիացի ճարտարապետ մը և որք պիտի ծառայէին կայսերական ընտանիքին դէմ ըլլալիք փորձին . որովհետև օժուով արարողութեան ներկայ պիտի ըլլային :

Վերջապէս 7 ոճրագործները Վարչապետի դաւակնիցներուն հետ յարաբերութեան մէջ էին : Այս ոճիւրները և փորձերը , որք քննութեան պատճառ եղան հետեւանք ունեցան գաղտնի ընկերութեան գտնուելուն և ձերբակալողները այդ ընկերութեան ձեռնարկներուն վրայ տեղեկութիւններ տուին , ասոր համար էր որ Չարը անոնց

մահուան դատապարտութիւնը փոխեց Սպերիա զրկելու և հոն ոմանք 15 տարուան և ոմանք 20 տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտելու :

Այս յայտնութեան յետոյ բազմաթիւ ձերբակալութիւններ եղան և ոստիկանութիւնը դեռ իր հետազոտութիւնները կը շարունակէ որք ամեն օր նոր արդիւնքներ կուտան :

Ամենախիստ միջոցներ ձեռք առնուած են :

ՄԱՐՏԻՐՈՍ ԿԻՆ ՄԸ . — Բարիդ , Սէն-Տընիի լուի թաղին մօտ արտակարգ և վայրագ դէպք մը մեծ յուզման մէջ ձգեց բոլոր բնակիչները :

Այս անգամ մարտիրոսը տղեկ մը չ'է այլ կին մ'է . Տիկին Հ . . . որուն ամուսինը 39 տարեկան մարդ մը , կառուցման ընդհանուր ընկերութեան մէջ պաշտօնեայ , երեք շաբաթէ ի վեր Բարիդի Բինէլ փողոցին մէջ գտնուած օգալուրի սենեակի մը մէջ փակած էր զինքը :

Գժբաղդ կինը որ արդէն շատոնց ի վեր դժբաղդ և անտանելի կեանք մը կանցնէր , ամուսնութեան երկրորդ օրը — եօթը տարի կայ — իր մարդկութեան ելած ամուսինը , սկսած էր զինքը շարչարել . նախանձոտ ու բարկացող բնուորութեան տէր մարդ մ'էր որ բան գործ ըրած էր անդադար իր խեղճ կինը տփել :

Կինը բանտարկել որոշած սենեկին պատուհանները բարձրով խնամով գոցած էր և անդթութեան տարօրէն նրբանքով մը փեղկերը ամուր երկաթէ տախտակներով դամած էր :

Բարեբաղդաբար մոռցած էր միւսնոյն զգուշութիւնները ձեռք առնելու բնական լուսաւորող երդիքի մասին : Տիկին Հ . . . այս պարագայէն օգտուելով կրցած էր հաղորդակցել գրացուհի մը հետ , որ չուանով իրեն ուտելիք կ'երկնցնէր :

Թշուառական ամուսինը այն աստիճան ահ ու սարսափ ազգած էր գրացիներուն որ մէկը չ'էր համարձակէր անցած դարձածի մասին կառավարութեան իմաց տալ , ողորմելի կինը գաղանին ձեռքէն ճողպրեցնելու համար :

Թշուառ կինը դեռ պիտի նուազէր այդ խուցին մէջ եթէ չարչարանքէ և ուժի լըքումէ ճարահատած ալ ինքնիրեն գաղափարը չ'ունենար գրացուհիին միջոցաւ իր ողբալի կացութիւնը Սէն Տընիի ոստիկանական գօմիսէր Պ . Տօմի իմացնելու :

Գօմիսէրը կարճ քննութեանէ մը յետոյ գնաց գտաւ Պ . Հ . . . ն , աշխատած առաջնորդանին մէջ և միասին Բինէլ փողոցը գնաց : Հոն գտան դժբաղդ արարածը , դաւկահար , երեք շաբթուան շարչարանքներէն նիհարցած , գթութիւն ազդելիք դէմքով մը : Տիկին Հ . . . ի տես իւր ամուսնոյն սոսկալի շղագական գրգռումէ մը բռնուելով նուազեցաւ : Պ . Տօմ քննութիւնը ամբողջացնելով լեցուն Ռեվօլվէր մը գտաւ տանը մէջ՝ որով վայրենին շատ անգամ կ'սպառնար իր կնոյ :

Անողորմ ամուսինը ոստիկանութեան տրամադրութեան տակ է այժմ :

Շիտակը օրինակելի՛ մարդ . . . :

ԲԱՄՊԱԿԱՐԱՉ կառախուժի մը մէջ անցած ուրբաթ հրդեհ ծագելով յիսուսեւ վեց հակ բամպակ այրեցաւ : Վնասին գումարն է 1200 ոսկի :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ ՈՒՐ ԵՐ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Պատ . Գործ . Ժողովոյ կողմէն պաշտօնապէս կը հաղորդուի թէ՛ հոկտ . 4 թրուականաւ Արաբկերի Առաջնորդ Գեր . Մուշեղ Ծ . Վ . Սերոբեանի հասցէին զրկուած է 30 Օամ . ոսկի Գրէտի Լիօնէի 12520 թիւ փոխանակագրով մը : Սոյն գումարը իրենցմէ պաշտպանեալ 10 որբերու տարեկան ծախքերուն թերհաշիւ է :

Ն . Վ . ՊՈՂՈՍ բաշա նուպար Նոյեմբեր 1 ին Մարսէյլէն պիտի մեկնի և 6 ին Աղէքսանդրիա պիտի հասնի :

ՊԱՐՄԻՑ ՇԱՀԻՆ եգիպտոս գալու լուրը կը հերքեն տեղական թերթերը :

ԿԸ ՊԱՏՄՈՒԻ որ քաղաքիս թղթատան պաշտօնեաները բաւական քանակութեամբ ագամանդներ գտած են հասած գիրքերու մէջ : Ի միջի այլոց՝ առաջի օրը , կազմեալ հատորի մը մէջ գտնուած է մօտաւորապէս 114 քրաթ ագամանդ : Այս թանկագին քարերը իրկողը ուզած է մաքսային ծախսերէն ազատել գանձնք :

ԵԳԻՊՏՈՒ ազգային դրամատան գանձապահ Պ . Հաճար անցեալները ստացաւ նամակ մը « Հէնրի Պրին » ստորագրութեամբ որ զայն կը հրաւիրէր որոշեալ օրը , ժամը և տեղը , դնել 2000 անգղիական ոսկի , եթէ սոսկալի պատժոյ մը ենթարկուել չ'էր ուզեր : Նամակին վերի մասին վրայ գրուած էր « Արեւելեան անիշխանական մասնաժողով » : Պ . Նաճար շուտ մոռցաւ այս նամակը , զոր նկատեց իբր խաղ մը :

Սակայն հասաւ երկրորդ նամակ մը , որուն մէջ՝ իբր ուշանալուն պատիժ՝ 500 ոսկւոյ յաւելում մը կար նախապէս ուղուած գումարին վրայ : Այս նամակն ալ առաջինին բաղդին արժանացաւ : Վերջապէս հասաւ երրորդ մը « Մ'ի կարծէք , կրտսեր նամակագիրը , որ կատակ կ'ընեմ , կամ ինքզինքս յայտնել չ'եմ ուզեր : « Իմ անունս է Հէնրի Պրին , և Ռուսական Օթէլը կը բնակիմ » . Պ . Հաճար ոստիկանութեան լուր տուաւ , քննութիւն մը բացուեցաւ : Նշանակուած Օթէլին տէրը՝ Հէնրի Պրին սենեակը ցոյց տուաւ : Մարդը երկու օրէ ի վեր եկած չ'էր . ոստիկանները գուռը կոտորեցին , ներս մտան և քիչ արժէքաւոր իրեղէն գտան պայուսակի մը մէջ : Գննութիւնը կը շարունակուի :

ԱՂԷՔՍԱՆԻՐԻՈՑ կառավարիչը ոստիկաններուն հրահանգներ տուաւ փնտռելու և ի պահանջել հարկին ձերբակալելու անգղիական Սփօթ մարտանաւին նաւաստիներէն վեց հոգի , որոնք անհետացած են քանի օրէ ի վեր :

ԻՊԵՆՏԻՈՍ Կ . ՍԱՐԱՑԵԱՆ

Դ Ե Վ Ձ Ա Կ
ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ
Շարս Պապ - Ել - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր , հանրածանօթ Անգղիացի վաճառական - զերձակ ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ եւ փորձառու , այս անգամ հաստատուած է հանգուցեալ նուպար Փաշայի Տայրաին դիմացը , նորաչէն խանութնէրուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան , արհեստի նրբութիւն տեսնելով , նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով , եւ մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է , չափաւոր զճարուսներու փոխան , ձեւաւոր եւ ճաշակաւոր վզնասներ ունենալով :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԱՊՐԵՍԻ ՄԸ
ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Միրելի բարեկամք, Պատ. գրությունք

Ընդարձակ եւ շքեղ սրճարան մը բանալու գիտաւորութիւն ունենալով, առիթէն կ'օգտուուիմ ձեզի ծանուցանելու համար որ յառաջիկայ ամսոյն սկիզբէն սկսեալ, պիտի ձեռնարկեմ արտադրել գինովներ, աղքատներ եւ մուրացկաններ, որոնք բնա պիտի ըլլան քաղաքիս ժուժկալ, արհեստաւոր եւ յարգելի դասակարգին: Իմ յաճախորդներու պիտի տամ նրբագրեցիկ ըմպելի մը, որ զանոնք պիտի գրգէ, կուտախորութեան, գողութեան, աւազակութեան եւ մարդասպանութեան, որպէսզի ապահովութիւնը նուազի, ծախքերը աւելնան, եւ ընկերական կեանքին բարեկեցութիւնը վտանգուի: Նաեւ պիտի ձեռնարկեմ խիստ չափաւոր գնով, եւ սուղ ժամանակի մէջ թեկնածուներ պատրաստելու յիմարանոցներու, հիւանդանոցներու, բանտներու եւ կախաղանի: Իմ ապրանքըս չարաղէտ գիպուածներու թիւը պիտի աւելցնէ, վտանգաւոր հիւանդութիւնները պիտի բազմացնէ, եւ անվաս անհանգստութիւնները անբուժելի ախտերու պիտի փոխէ: Դարձեալ իմ ապրանքիս շնորհիւ պիտի առնեմ ոմանց կեանքը, շատերուն բանականութիւնը, մեծամասնութեան ստացուածքը եւ ամենուն հանդիսն ու խաղաղութիւնը: հայրերը՝ սատանաներու, կիները՝ այրիներու, զաւակները՝ որբերու, եւ ամենը մուրացկաններու պիտի փոխեմ: Տգիտութեան մէջ պիտի մեծցնեմ նոր սերունդը եւ զայն ազգին գլխուն բնա մը, փորձանք մը պիտի ընեմ: Իմ միջոցաւ մայրերը պիտի մոռնան իրենց երախաները, եւ կոյսերը՝ իրենց թանկագին անմեղութիւնը: կրօնքի պաշտօնեաները պիտի ապականեմ, եկեղեցոյ սրբութիւնը պիտի եղծեմ, հաւատացեալները պիտի մոլորցնեմ, եւ անոնց սախարհային, հոգեկան եւ յաւիտեան կան մահուան պատճառ պիտի ըլլամ: Եւ եթէ մարդ մը յանգզնի ինձ հարցնել թէ ինչ իբրաւ մը այսպիսի աղէտքներ կը կուտակեմ այս գերեզմանիկ քաղաքին վրայ, պիտի պատասխանեմ որ ոգելից ըմպելիներու առուտուրը շահաբեր է, եւ յարգելի բազմաթիւ անձեր ատով կը զբաղին: Կառավարութեան պահանջած տուրքը կը վճարեմ, եւ եթէ այս փորձանքները ես չ'ըրեմ ձեր գլխուն, ուրիշ մը պիտի բերէ: Ազատ քաղաքի մէջ ենք, եւ իրաւունքն ստացայ բընաւորութիւնը վատթարացնելու, առողջութիւնը քանդելու, կեանքը կարճեցնելու եւ հոգին կորսնցնելու ամեն անհատի որ կը հաճի զիս իրեն մատակարար ընդունելու: Պատուոյս վրայ խօսք կուտամ որ կէտ առ կէտ պիտի կատարեմ իմ պաշտօնս: Հիտեւաբար ամեն անոնք որոնք կը փափաքին զերենք կամ իրենց սիրելիները եւթարկուած տեսնել այս պայծառափայլ շարեաց, թող բարեհաճին ինձ օգնել: Պաշտօնատեղիս է հաշուեսեղանս ուր յաճախորդներս զիս պիտի գտնեն, միշտ կազմ ու պատրաստ իրենց հրաւրաններուն: Եւ ուր պիտի հրամայեմ իրենց ի զինքան փարայի՛ գաւաթիկ մը, որուն պարունակութիւնն է անվրէպ միջոց իրենց բաղձանաց հասնելու, այսինքն՝ պատիւ ունիմ կրկնելու՝ արտադրել խենդեր, յիմարներ, ապուշներ, գողեր, աւազակներ, մարդասպաններ, կորաքամակներ, ջլախատորներ, հիւժախտաւորներ, թողբախտաւորներ այլովքն հանդերձ:

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

Կիրակի 14 Հոկտեմբեր 1900

5244	2523	4190	1688	0306	1759	2045
3120	4486	5310	5735	7246	8542	1272
1763	2300	3264	4940	5464	6606	7464
1715	1827	2504	3899	5246	5601	7127
			8258	8938		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ՞՞

Հիմնաւ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՉՐԸ

Օտանեիցի դեղարանին դիմացի փողոցին մեջ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

մէջ, մաքուր եւ ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երջարեակաւակներ, Գիրքեր, Հրախրագրեր, Մահազդներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ:

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՋԷ՛՛՛՛ ՈՒՍԱՆԻԼ

Երիտասարդ մը որ երկար տարիներ ժամագործութեան արհեստին հետեւելով կատարեալ հմտութիւն ստացած է ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին մէջ, կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճառատուն մը բանալու գործադրելու և միանգամայն քիչ ատենի մէջ արհեստը սանկելու փափաքը ունենայ:

Արհեստաւոր երիտասարդը կը գտնուի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բանակցել, անոնք որ հետամուտ են:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Դ

Նոր Կեանքի ի եւ Անահիտ ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողը առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով խմբագրատունս դիմեն, դիւրագին զայնս գնելու:

ՀՅԷՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի 14 Հոկտեմբեր 1900

5299	9670	7231	9514	8316	9023	7441
6990	144	5903	9054	7575	3692	9204
4233	9265	9436	1334	1409	1161	5256
	5543	3189	8539	1145	6556	2189

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԻԱՐՋԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԱԽՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒՆ 1 ՄԵԼԵԱՐ 437 ՄԵԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ինպատիւ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այսարհի ուրիշ որ և է ընդունութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՆ:

Քանի որ Սէլվաձեւն վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂԻՆԻ նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է: Նայնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂԻՆ է սկսեալ մինչև 2500 ՂԻՆ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և սքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնսօլի բազմազան Բանտիւններ և ամեն ճաշակի յարմար Գահիրեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գօզօկրաֆներու:

Ա Ջ Դ

Քիչի Ծորօր գիւղի Ազգայիններէն ճիւղար Մարտիրոս Եանօեանի որդի Պ. Կարապետ Եանօեան 26 ամեայ երիտասարդը Հայաստանի գէպերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէարեակ ազգականները կ'ոյն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ երիտասարդը:

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան:

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նլմանսօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ:

Ա. ՊԱԼԵԱՆ
Մ Ա Թ Ի Լ Տ
(Գաղթականաց կեանքէն)
ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ
ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱԲԱԾՈՅ
ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՉ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն գնել փափաքողներն կամ բաժանորդուուիլ ուզողներն, կրնան դիմել Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԻԱՐՋԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԱԽՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒՆ 1 ՄԵԼԵԱՐ 437 ՄԵԼՈՆ

Այսարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործաւ կատար յ'Ազգ.բանագրիս